

Անցկացվեց դպրոցականների շախմատի 9-րդ օլիմպիադայի մարզային փուլը

Ապրիլի 8-ին Գորիսի թիվ 3 դպրոցում տեղի ունեցավ Սյունիքի մարզի դպրոցականների շրջանում անցկացվող Հայաստանի Հանրապետության դպրոցականների շախմատի 9-րդ օլիմպիադայի մարզային փուլը:

Օլիմպիադան անցկացվում էր թիմային հաշվարկով: Թիմի կազմում ընդգրկված էին 2 տղա և մեկ աղջիկ: Յուրաքանչյուր տարածքից մասնակցում էր երկու թիմ՝ մեկը, որպես հիմնական դպրոցների աշակերտների շրջանում անցկացված մրցումների, մյուսը՝ ավագ և միջնակարգ դպրոցների աշակերտների շրջանում անցկացված մրցումների հաղթող:

Մարզային փուլում հիմնական դպրոցների պայքարում հաղթող են ճանաչվել Կապանի թիվ 6 հիմնական դպրոցը (մարզիչ՝ Վ. Թադևոսյան), իսկ ավագ և միջնակարգ դպրոցների պայքարում՝ Սիսիանի ավագ դպրոցի թիմերը (մարզիչ՝ Ն. Ներսիսյան): Մրցումների գլխավոր մրցավարն էր Սամվել Մարգարյանը:

Հաղթող թիմերը մարզը կներկայացնեն մայիսի 2-5-ին Երևանում կայանալիք օլիմպիադայի եզրափակիչ փուլում: